ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
գ. Գայ , Ա. Խաչատրյան-1, araks.armavir@mta.gov.am, 060 88 77 77

28 հունվարի 2025

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 33-ՐԴ ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Սիրելի հայրենակիցներ,

հայոց բանակի հրամանատարներ և զինվորներ, շնորհավորում եմ բոլորիս Հայոց բանակի կազմավորման 33-րդ ամյակի առթիվ:
Հայոց բանակը մեր պետականության ամենաարժեքավոր ձեռքբերումներից է իսկ հայ զինվորը անկախության և անվտանգության գլխավոր երաշխավորը:
Մենք ամեն օր վկան ենք մեր երկրի սահմանները պաշտպանող զինվորի սխրանքին, ով իր կյանքի գնով կատարում է իր առջև դրված առաջադրանքը՝ պաշտպանելով այն ամենը, ինչը սուրբ ու նվիրական է բոլորիս համար:
Սիրելի զինվորներ, ձեր դժվար, հայրենանվեր, հերոսական դրսեւորումներով լի զինվորական պարտքը շարունակեք կատարել մեր ազգային ամենանվիրական նպատակների բարձր գիտակցությամբ:
Մեր խոնարհումը նաև այն հայորդիներին, ովքեր իրենց կյանքը չխնայեցին և մինչև վերջին պահը փորձեցին պահել մեր հայրենի հողը:
Հավերժ փառք Ձեզ տղե՜րք:
Կրկին շնորհավորելով բոլորիս՝ Հայոց փառապանծ բանակի կազմավորման 33-ամյակի առթիվ, մաղթում եմ խաղաղություն և բարօրություն, հայրենիքի պաշտպաններին՝ բարի ծառայություն ու նորանոր ձեռքբերումներ՝ հանուն ուժեղ և հզոր Հայաստանի Հանրապետության:
Մտածենք և գործենք մեր երկրի, մեր պետության, մեր ժողովրդի, մեր այսօրվա ու վաղվա համար:
Փա՛ռք մեր զինված ուժերին:
Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ